ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

ք.Երևան «27» փետրվարի 2026թ.

**№ 1**

**1. Օրակարգի հարց 1 -** Ընկերության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվության քննարկման հետաձգում:

Քվեարկության արդյունքում Տնօրենների խորհուրդը որոշեց՝
Ընկերության 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը քննարկել աուդիտորական եզրակացության տրամադրումից հետո:

**2. Օրակարգի հարց 2 -** Ընկերության 2026 թվականի եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատում:

Ղեկավարվելով բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 84-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ընկերության տնօրենների խորհրդի 2026 թվականի փետրվարի 27-ին կայացած նիստի քվեարկության արդյունքները՝ Տնօրենների խորհուրդը որոշեց՝
Հաստատել Ընկերության 2026 թվականի ծախսերի և եկամուտների նախահաշիվը */Հավելված 1/:*

**3. Օրակարգի հարց 3 -** Ընկերության աշխատակիցների հաստիքային դրույքաչափի ավելացում:

Հիմք ընդունելով Ֆինանսական գծով տնօրենի 24.02.2026թ. Զեկուցագիրը՝ հաստիքային դրույքաչափի ավելացման վերաբերյալ, ինչպես նաև Ընկերության տնօրենների խորհրդի 2026 թվականի փետրվարի 27-ին կայացած նիստի քվեարկության արդյունքները՝ Տնօրենների խորհուրդը որոշեց՝
Հաստատել նիստի օրակարգում ներառված 3-րդ կետը և այն գործածության մեջ դնել 2026 թվականի մարտի 01-ից */Հավելված 2/:*

**3.1.** Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը վերապահել Երևանի մետրոպոլիտենի Գլխավոր տնօրենի ժ/պ պարոն Բաբկեն Սեդրակյանին:

**4. Օրակարգի հարց 4** - 2026 թվականի գործարար ծրագրի հաստատում:

Ղեկավարվելով բաժնետիրական ընկերությունների մասին ՀՀ օրենքի 84-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ընկերության տնօրենների խորհրդի 2026 թվականի փետրվարի 27-ին կայացած նիստի քվեարկության արդյունքները՝ Տնօրենների խորհուրդը որոշեց՝

Հաստատել 2026 թվականի գործարար ծրագիրը */Հավելված 3/*:

**Տնօրենների խորհրդի նախագահ՝** **Ն. Խաչատրյան**